բայ կապում են հանդերձից պատռած կտորնե-
ը՝ գլխից կտրած մազի փունջերը։ Այդ ամենը
անուանվում է «թուխ—մանուկ»։

«Գարա—օղլանը» միատեսակ միայն ծառերն
են՝ որոնք որ այգու՝ արտի մէջ որ բուսնին՝
այնտեղը նուիրական կը դառնայ։ Այդ ծառերը
ոչ ոք իրաւունք չունի կտրել՝ ծախել՝ վառել՝
բացի գիւղացիներից ընտրուած մի ընտանիք՝ որ
գիւղի հիւրերը ընդունում է նրանց ծանրու-
թիւնը իւր վերայ առնելու։ Ամենամեծ անպատ-
ուութիւն է համարուած բեխեր կտրելը*)՝ աւելի
լաւ է «Գարա—Գոյունցու» գլուխը կտրել դորա
տեղ։ Գարա—Գոյունցիք իւրեանց ծէսերը գաղտ-
նի են կատարում՝ վախենալով թաթարներից՝
դրա համար ես իմ հետախուզութեան մէջ
այնքան առաջ չը կարողացայ գնալ։ Շատ բա-
ներ կան՝ որ երկիւղից ծածկում են։ Նրանք
արտաքուստ ձևացնում են իւրեանց մահմեդա-
կաններ՝ բայց ոչ «օրուջ» (ծոմ) ոչ «նամազ»
(աղօթք) են անում։ Գինի օղին անխիղճ խը-
մում են՝ առհասարակ հայ եղած տեղեր նրանց
մօտ հիւր կ'իջնին և շատ համակրում են նո-
ցա։ Հայերիցը այն առաւելութիւնն ունին՝ որ
ձմեռները պարապում են արհեստներով՝ առա-

---

*) Հայերի մէջ եւս բեխերը տղամարդութեան նշան է
եւ նրանց կտրելը մեծ ամօթ է համարվում։